

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **ՄԱՍ I.** ՄԱԶԾ «Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր. օժանդակություն կարողությունների զարգացմանը և աջակցություն տուժածներին» ----- 4
2. **ՄԱՍ II.** Ապահով ճամփորդություն. նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիր «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում». Փուլ I----- 5
3. **ՄԱՍ III.** Ապահով ճամփորդություն. նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիր «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում». Փուլ II----- 10
4. **ՄԱՍ IV.** Ապահով ճամփորդություն. նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիր «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում» Փուլ I և II` Ամփոփ հաշվետվություն ---- 17



ՄԱՍ I

ՄԱԶԾ «Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր. օժանդակություն կարողությունների զարգացմանը և աջակցություն տուժածներին»

Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիրը Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) եռամյա համատեղ նախաձեռնություն է, որն իրականացվում է ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: Այս ծրագրի նպատակն է՝ նպաստել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային համակարգի հետագա կատարելագործմանը՝ քաղաքականության և ինստիտուցիոնալ մակարդակներով, ինչպես նաև ուղղակի աջակցություն ցուցաբերել թրաֆիքինգից տուժած անձանց:

«Ապահով ճամփորդություն». նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության (այսուհետ՝ Միգրացիոն գործակալություն) կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ՝ վերջիններիս միջև 2007 թ. նոյեմբերի 7-ին կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա: Այսպիսով, 2007թ, նոյեմբեր-2009թ ապրիլ ամիսներին իրականացվեց ծրագրի առաջին փուլը, իսկ 2009թ մայիս-դեկտեմբեր ամիսներին՝ երկրորդ փուլը:

Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ ստեղծել նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցման/ստուգման համար անհրաժեշտ համակարգ, որի արդյունքում հնարավոր կլինի տեղեկատվություն գրանցել արտագնա աշխատանքի մեկնողների վերաբերյալ (այդ թվում՝ մեկնման վայրի հասցեն, գործատուի տվյալները, տվյալ երկրում գործող աշխատանքի տեղավորման կարգը և պայմանները, որոշակի աշխատանքի բնույթի ու պայմանների և աշխատանքային պայմանագրի կնքման վերաբերյալ տեղեկություններ, բնակության հնարավոր վայրերը), վերջիններիս տեղեկատվություն տրամադրել ապագա գործատուի և առաջարկվող աշխատանքի արժանահավատության վերաբերյալ և նվազեցնել նրանց՝ թրաֆիքինգի զոհ դառնալու հավանականությունը:

Ծրագրի երկրորդական նպատակն իր բնույթով «ապահովող» է և նախատեսված է այն դեպքերի համար, երբ, անկախ գրանցումից և պատշաճ ստուգումներից, արտագնա աշխատանքի մեկնած անձն, այդուհանդերձ, դարձել է թրաֆիքինգի զոհ կամ պարզապես անհետացել է մերձավորների տեսադաշտից:

Ծրագրի շրջանակներում Երևան, Գյումրի և Արտաշատ քաղաքներում ստեղծվել են միգրացիոն հարցերով խորհրդատվական կենտրոններ: Այդ նպատակով Միգրացիոն գործակալությունը հատկացրել է համապատասխան տարածքներ և անձնակազմ, իսկ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրն այդ կենտրոններն ապահովել է համապատասխան կահավորմամբ և սարքավորմամբ: Հիշյալ կենտրոնները նպատակակետ երկրների վերաբերյալ հարցումները կկատարեն այդ երկրներում խորհրդատվական կետերի/ինֆորմացիոն կենտրոնների միջոցով:



ՄԱՍ II

Ապահով ճամփորդություն. նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիր «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում». Փուլ I

Վերոնշյալ ծրագրի իրականացման թե առաջին, և թե երկրորդ փուլերում ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի և Միգրացիայի միջազգային կազմակերպության միջև կնքվեցին պայմանագրեր՝ իրականացնելու համար ստորև գործողությունները: Ծրագրի առաջին փուլում իրականացվել են.

ՄՄԿ գործողությունների շրջանակը

- Նկարահանվել են մեկ սոցիալական հոլովակ աշխատանքային միգրացիայի և թրաֆիքինգի առնչության վերաբերյալ և մեկական ռադիո և տեսահոլովակ խորհրդատվական կենտրոնների գործունեության վերաբերյալ: Հոլովակները հեռարձակվել են հեռուստատեսությամբ և ռադիոյով՝ հանրապետական և Շիրակի և Արարատի մարզային ալիքներով:
- Խորհրդատվական կենտրոնների վերաբերյալ տեղեկատվություն է ուղարկվել Արմենտել և Վիվասել բջջային ցանցի բաժանորդներին՝ կարճ տեքստային հաղորդագրությունների ձևով (SMS)
- Մշակվել և հրատարակվել են «Ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույց Ռուսաստանի Դաշնությունում» և «Ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույց Արաբական Միացյալ Էմիրություններում» գրքույկները 1700-ական տպաքանակով և տրամադրվել են խորհրդատվական կենտրոններին:
- Կազմակերպվել է եռօրյա ուսուցում կենտրոնների 7 աշխատակիցների համար /3 անձ Երևանից, 2-ական՝ Շիրակից և Արարատից/: Մասնակիցներին մատուցվել են գիտելիքներ միգրացիայի և թրաֆիքինգի վերաբերյալ երկրում իրականացվող քաղաքականության, միջազգային և տեղական օրենսդրության, նպատակակետ երկրների, մասնավորապես՝ ՌԴ օրենսդրությանը և Միացյալ Արաբական Էմիրությունների օրենսդրությանը, և արտագնա աշխատանքի մեկնողների հետ աշխատելու կիրառական, այդ թվում՝ հոգեբանական հմտություններ: Ուսուցումն արդյունավետ անցկացնելու համար հրավիրվել են ՄՄԿ Մոսկվայի գրասենյակի փորձագետ պարոն Սերգեյ Բրեստովիցկին և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Արտաքին գործերի նախարարության, ՀՀ Արհմիությունների կոնֆեդերացիայի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Միգրացիայի միջազգային կազմակերպության, ՄԱԶԾ և ԷԳՈ հասարակական կազմակերպության աշխատակիցները: Ստորև ներկայացվում է հիշյալ եռօրյա ուսուցման օրակարգը:





IOM International Organization for Migration
 OIM Organisation Internationale pour les Migrations
 OIM Organización Internacional para las Migraciones



**«Աշխատանքային միգրացիա»
 դասընթաց**

Սեպտեմբեր 10 – 12, 2008

Թերջան հյուրանոց, Սիլիկյան թաղամաս, 15 փողոց, հեռախոս՝ 399699

տեղափոխումը ՄԱԿ-ի շենքից 08:30

Օր 1

10.09. 2008

Վարող՝ Քրիստինա Գալստյան

08:30

Փոխադրում ՄԱԿ-ից դեպի հյուրանոց

09:00 – 09:15

Գրանցում

09:15 – 09:30

Բացման խոսք

Պարոն Գագիկ Եգանյան, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ

Տիկին Աիդա Ղազարյան, ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի ղեկավար Տիկին Քրիստինա Գալստյան, ՄԱԿ հայաստանյան առաքելության ծրագրերի իրականացման և զարգացման բաժնի պետ

09:30 – 10:15

Ընդհանուր տեղեկություն միգրացիայի վերաբերյալ /կանոնավոր և անկանոն/։ Աշխատանքային միգրանտների և բնութագրիչները /մղող և ձգող գործոններ, առողջապահական և գենդերային խնդիրներ և այլն/, միգրացիոն տերմինաբանություն, ընդհանուր տեղեկություններ մարդկանց մաքսանենգության և մարդկանց առևտրի վերաբերյալ

Հարցեր/պատասխաններ

տիկին Նունե Ասատրյան, ՄԱԿ Հայաստան, ծրագրի ղեկավար

Պարոն Սերգեյ Բրեստովիցկի, ՄԱԿ Ռուսաստան

10:15 – 10:45

Աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանությունն ապահովող միջազգային օրենսդրական դաշտը։

Հարցեր/պատասխաններ

Պարոն Սերգեյ Բրեստովիցկի, ՄԱԿ Ռուսաստան

10:45 – 11:15

Աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանությունն ապահովող տեղական օրենսդրական դաշտը; թրաֆիքինգի դեմ պայքարի տեղական օրենսդրությունը

Հարցեր/պատասխաններ

Պարոն Արսեն Հասսայան, Տարածքային կառավարման նախարարություն

տիկին Նունե Ասատրյան, ՄԱԿ Հայաստան, ծրագրի ղեկավար

11:15 – 11:30

Սուրճի ընդմիջում

11:30 – 12:00

Ծագման երկրներում աշխատանքային միգրանտների պաշտպանությունը /քաղաքականություն, օրենսդրություն և լիցենզավորում, աջակցող ծառայություններ/։

Հարցեր/պատասխաններ

Պարոն Արամ Քոչարյան, ՄԱԿ Հայաստանի և սոցիալական հարցերի

նախարարություն



12:00 – 12:30	Աշխատանքային միգրանտների պաշտպանությունը ընդունող երկրներում /աշխատաշուկայի ուսումնասիրություն, նախամիգրացիոն ուսուցումներ, իրազեկում, միջազգային համագործակցություն: Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Սերգեյ Բրեստովիցկի, ՄՄԿ Ռուսաստան</i>
12:30 – 12:50	Վերադարձողների պաշտպանությունը և աջակցություն նրանց վերաինտեգրմանը: Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Խաչատուր Կազազյան, ՄՄԿ Հայաստան, Փոքր բիզնեսի զարգացման ծրագրի ղեկավար</i>
12:50 – 14:00	<i>Ճաշի ընդմիջում</i>
14:00 – 15:00	Պետական և մասնավոր զբաղվածության գործակալությունների դերը Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Արամ Քոչարյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</i> <i>Պարոն Սերգեյ Բրեստովիցկի, ՄՄԿ Ռուսաստան</i>
15:00 – 15:30	<i>Սուրճի ընդմիջում</i>
15:30 – 16:30	Արաբական Միացյալ Էմիրությունների միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Արթուր Սարգսյան, Արտաքին գործերի նախարարություն</i>
16:30 – 17:00	Առաջին օրվա ամփոփում Հարցեր/պատասխաններ <i>տիկին Նունե Ասատրյան, ՄՄԿ Հայաստան, ծրագրի ղեկավար</i>
17:00	Մեկնում Թերջան հյուրանոցից

Օր 2

11.09.2008

Վարող՝ Քրիստինա Գալստյան

08:30	<i>Մեկնում դեպի Թերջան հյուրանոց ՄԱԿ-ի շենքից</i>
09:00 – 09:15	Առաջին օրվա վերիիջում Հարցեր/պատասխաններ <i>տիկին Նունե Ասատրյան, ՄՄԿ Հայաստան, ծրագրի ղեկավար</i>
09:15 – 09:40	Միգրացիայի միջազգային կազմակերպության դերն ու ծրագրային գործունեությունը ՀՀ-ում, այդ թվում՝ միգրացիայի կառավարման և թրաֆիկինգի դեմ պայքարի ոլորտներում <i>Քրիստինա Գալստյան, ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության ծրագրերի բաժնի ղեկավար</i>
09:30 – 10:30	Գործնական հանձնարարականներ/խորհուրդներ վարվելակերպի, հանդուրժողականության, ընդունող երկրի մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև ընդունող երկրի հյուպատոսական ծառայության, ՀԿ-երի, համապատասխան հումանիտար կազմակերպությունների վերաբերյալ, որոնց միգրանտը կարող է դիմել անհրաժեշտություն դեպքում: Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Արթուր Սարգսյան, Արտաքին գործերի նախարարություն</i>
10:30 – 11:30	Անկանոն աշխատանքային միգրացիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ /ընդունող և տարանցիկ երկրների միջև իրականացվող գործունեություն, սահմանային հսկողություն և վիզային կանոնություն, անօրինական միգրանցիան



	խթանողների /անօրինական զբաղվածություն, մարդկանց առևտուր և մաքսանենգություն/ հանդեպ գոյություն ունեցող սանկցիաները: Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Սերգեյ Բրեստովիցկի, ՄՄԿ Ռուսաստան</i>
11:30 – 12:00	<i>Սուրճի ընդմիջում</i>
12:00 – 13:00	Ռուսաստանի Դաշնության միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Սերգեյ Բրեստովիցկի, ՄՄԿ Ռուսաստան</i>
13:00 – 14:00	<i>Ճաշի ընդմիջում</i>
14:00 – 14:20	Կանոնավոր աշխատանքային միգրացիայի առավելությունները /դրամական փոխանցումներ, զարգացում և այլն/: Հարցեր/պատասխաններ <i>Պարոն Խաչատուր Կազազյան, ՄՄԿ Հայաստան, Փոքր բիզնեսի զարգացման ծրագրի ղեկավար</i>
14:20 – 15:30	Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ՄՄԿ պատրաստած վավերագրական ֆիլմի դիտում
15:30 – 15:45	<i>Սուրճի ընդմիջում</i>
15:45 – 16:10	Ազգային ուղղորդման մեխանիզմի ներկայացում
	տիկին Ջյունիկ Աղաջանյան, ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ
16:10 – 16:40	Թրաֆիկինգի զոհերի աջակցումը ՀՀ-ում <i>Վիկտորիա Ավակովա, Միացյալ մեթորդիստների օգնության կոմիտե</i>
16:40 – 17:30	Թրաֆիկինգի դեմ պայքարող ՀԿ-երի ցանցի աշխատանքների ներկայացում ՀԿ-երի ցանց
17:30 – 17:50	Ամփոփում և գնահատում Հարցեր/պատասխաններ <i>տիկին Նունե Ասատրյան, ՄՄԿ Հայաստան</i>
17:50	Սեկնում

Օր 3,

12-ը սեպտեմբերի, 2008թ.

ՄԱԿ-ի շենք, նիստերի դահլիճ, 124 սենյակ

“Շփման և փոխհարաբերությունների արվեստը”

Դասընթաց

Վարդղ` Մարիաննա Ֆրունջյան, «Էզո երիտասարդ հոգեբանների ՀԿ»

10:00- 10:15 Դասընթացի ներկայացում, մասնակիցների ծանոթացում:

10:15- 10:20 Ակրնկալիքների դասակարգում:

10:20- 12:00 Հաղորդակցման հիմնական գործառույթները և հմտությունները:

- Հաղորդակցման խոչընդոտները;
- Հաղորդակցման միջոցները;
- Արդյունավետ հաղորդակցում: Անկեղծություն և էմպատիա;
- Լսելու ունակությունը , որպես մասնագիտական հմտություններ;
- Ռեֆլեքսայի հմտությունները և հետադարձ կապ;

12:00- 12:30 սուրճի ընդմիջում

12:30- 13:30 Գործնական վարժանքներ



- Ինքնավերլուծության հմտությունների զարգացում;
- Աջակցող և ակտիվ լսողություն;

13:30- 14:10 “Դերային խաղ” - Անհատական դեպքի ներկայացում

14:10-14:20 Հարց պատասխան

14:20-14:30 Ամփոփում

14:30 – 15:00 Դասընթացի ամփոփում և վկայականների հանձնում
ՄՄԿ
ՀՀ Կառավարություն
ՄԱԶԾ

ՄՄԿ հայաստանյան առաքելություն

Պ. Ադամյան 14, ՄԱԿ-ի շենք

Հեռախոս՝ 585692; 583786



ՄԱՍ III

Ապահով ճամփորդություն. նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիր «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում». Փուլ II

ՄՄԿ հայաստանյան առաքելությունը 2009թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացրել է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի կողմից ֆինանսավորվող «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում» ծրագիրը: Ծրագրի գործընկերներն են ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունը, Երևանի, Շիրակի և Արարատի մարզպետարանների միգրանտների աջակցության կենտրոնները, տարածքային և ինքնակառավարման մարմինները, տեղական լրատվամիջոցները և տեղական ՀԿ-երը:

Ծրագրի թիրախ խումբ են հանդիսանում մարզպետարանների աշխատակիցները, հասարակական կազմակերպությունները, պոտենցիալ և նույնականացված թրաֆիքինգի զոհերը, միգրանտները և լայն հասարակությունը:

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների շահագործման ենթարկվելը կամ թրաֆիքինգի զոհ դառնալը կանխարգելելն է: Այս նպատակն իրագործելու համար ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները`

1. Կարողությունների հզորացում և համագործակցություն

- Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոնների և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների աշխատակիցների ուսուցման համար կազմվել է դասացուցակ` հաշվի առնելով նրանց ներկա կարիքները
- Կազմակերպվել և իրականացվել է եռօրյա ուսուցում Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոնների աշխատակիցների և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների աշխատակիցների համար /5 հոգի Շիրակի մարզից և 4 հոգի Արարատի մարզից/: Ուսուցողական թեմաները մատուցվել են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Արտաքին գործերի նախարարության, ՀՀ Արհմիությունների կոնֆեդերացիայի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Միգրացիայի միջազգային կազմակերպության, ՄԱԶԾ աշխատակիցների կողմից:

Ուսուցման ընթացքում մատուցված թեմաներն են`

Թեմա 1. Ընդհանուր տեղեկություն միգրացիայի վերաբերյալ /կանոնավոր և անկանոն/: Աշխատանքային միգրացիայի միտումները և բնութագրիչները /մղող և ձգող գործոններ, առողջապահական և գենդերային խնդիրներ և այլն/, միգրացիոն տերմինաբանություն, ընդհանուր տեղեկություններ մարդկանց մաքսամենզության և մարդկանց առևտրի վերաբերյալ

Թեմա 2. Թրաֆիքինգի զոհերի ազգային ուղղորդման մեխանիզմի ներկայացում

Թեմա 3. Աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանությունն ապահովող տեղական օրենսդրական դաշտը; թրաֆիքինգի դեմ պայքարի տեղական օրենսդրությունը

Թեմա 4. Ծագման երկրներում աշխատանքային միգրանտների պաշտպանությունը /քաղաքականություն, գրանցում և լիցենզավորում, աջակցող ծառայություններ` ներառյալ մինչ մեկնելը գրանցման և կողմնորոշման օգնությունները/:

Թեմա 5. Աշխատանքային միգրանտների պաշտպանությունը ընդունող երկրներում /աշխատաշուկայի ուսումնասիրություն, աշխատանքի գտնելու միգրացիոն ուսուցումներ, իրազեկում, միջազգային համագործակցություն:

Թեմա 6. Պետական և մասնավոր աշխատանքի գործակալությունների դերը



Թեմա 7. Վերադարձողների պաշտպանությունը և աջակցություն նրանց վերաինտեգրմանը:

Թեմա 8. Կանոնավոր աշխատանքային միգրացիայի առավելությունները /դրամական փոխանցումներ, զարգացում և այլն/:

Թեմա 9 – 10. Վրաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի և Իրանի միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը

Թեմա 11. Գլոբալ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը աշխատանքային միգրացիայի վրա

Թեմա 12. Աշխատանքային միգրացիայի կառավարումը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում. Համագործակցություն և իրավական կարգավորում

Թեմա 13. Աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանությունն ապահովող միջազգային օրենսդրական դաշտը:

Թեմա 14. Թուրքիայի և Հունաստանի միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը

Թեմա 15. Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոնների աշխատանքային փորձի ներկայացում

Թեմա 16. Արհմիությունների համաշխարհային կոնֆեդերացիայի դերը աշխատանքային միգրացիայի ոլորտում

Թեմա 17. Ռուսաստանի Դաշնության և Արաբական միացյալ էմիրությունների միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը

Թեմա 18. Գործնական հանձնարարականներ/խորհուրդներ վարվելակերպի, հանդուրժողականության, ընդունող երկրի մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև ընդունող երկրի հյուպատոսական ծառայության, ՀԿ-երի, համապատասխան հումանիտար կազմակերպությունների վերաբերյալ, որոնց միգրանտը կարող է դիմել անհրաժեշտություն դեպքում

- Տեղական ՀԿ-երի և լրատվության միջոցների 20 ներկայացուցիչների համար կազմակերպվել և անցկացվել է սեմինար, որը լուսաբանել է միգրանտների աջակցության կենտրոնների աշխատանքը, աշխատանքային միգրացիայի խնդիրները և այլ երկրների փորձը այդ ոլորտում:

2. Հասարակության իրազեկում

- Հիմնական ընդունող երկրների (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան և Իրան) միգրացիոն օրենսդրությունը լուսաբանող ձեռնարկներ են մշակվել, հրատարակվել և տարածվել ծրագրի շրջանակներում:
- Արտադրված երկու տեսահոլովակները հեռարձակվել են Արարատի և Շիրակի մարզային հեռուստատեսային ալիքներով 2 շաբաթ շարունակ:
- 14 օր Երկիր Մեդիա, ԱԼՄ և Շանթ հեռուստաալիքներով վազող տողով հեռարձակվել Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոնների հասցեները և թեժ գծերի հեռախոսահամարները:

Ստորև ներկայացվում է վերոհիշյալ ուսուցումների օրակարգը:





IOM International Organization for Migration
OIM Organisation Internationale pour les Migrations
OIM Organización Internacional para las Migraciones



Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ սեմինար քննարկում

Նոյեմբեր 2, 2009

ՄԱԿ-ի շենք, նիստերի դահլիճ, 124 սենյակ

- 12:00 – 12:15 Գրանցում
- 12:15 – 12:30 Բացման խոսք
ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետի տեղակալ տիկին Իրինա Դավթյան ՄԱԶԾ Սշտական ներկայացուցչի տեղակալ պարոն Դիրկ Բոբերգ
ՄԱԿ Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար տիկին Իլոնա Տեր-Մինասյան
- 12:30 – 12:50 Միգրացիայի միջազգային կազմակերպության դերն ու ծրագրային գործունեությունը ՀՀ-ում՝ աշխատանքային միգրացիայի և թրաֆիկինգի դեմ պայքարի ոլորտներում: «Աշխատանքային միգրանտների խորհրդատվական կենտրոնների կարողությունների զարգացում և նրանց մասին հանրության իրազեկում» ծրագրի ներկայացում:
«Աշխատանքային միգրանտների խորհրդատվական կենտրոնների կարողությունների զարգացում և նրանց մասին հանրության իրազեկում» ծրագրի համակարգող տիկին Նունե Ասատրյան
- 12:50 – 13:00 Աշխատանքային միգրանտների աջակցման կենտրոնների մասին սոցիալական գովազդների ցուցադրում
- 13:00 – 13:20 Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոնների աշխատանքային փորձի ներկայացում
(1) Երևանի Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոն
Հարցեր/պատասխաններ
Պարոն Համբարձում Աբրահամյան, տիկին Վիկտորյա Հովհաննիսյան, տիկին Հայկանուշ Չոբանյան
- 13:20 – 13:30 (2) Շիրակի Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոն
Հարցեր/պատասխաններ
Պարոն Ռաֆիկ Փոթինյան
- 13:30 – 13:40 (3) Արարատի Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոն
Հարցեր/պատասխաններ
Պարոն Գեղամ Միրզոյան



- 13:40 – 14:20 Քաղաքացիական հասարակության դերը և համագործակցությունը աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանության գործում: Քննարկում:
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Պետական գրադավաժության գործակալության պետի տեղակալ պարոն Գարիկ Սահակյան,
ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ տիկին Ջյունիկ Աղաջանյան,
ՀՀ Արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության առաջին քարտուղար Արթուր Սարգսյան,
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և գրադավաժության վարչության գլխավոր մասնագետ Արամ Քոչարյան
- 14:20 – 14:30 Փակման խոսք
ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետի տեղակալ տիկին Իրինա Դավթյան
Տիկին Մարինա Սուլախյան, ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի համակարգող
Տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ղեկավար





IOM International Organization for Migration
 OIM Organisation Internationale pour les Migrations
 OIM Organización Internacional para las Migraciones



Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ուսուցում

Նոյեմբեր 18 – 20, 2009

Օր 1, 18.11.2009

Վարող՝ տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

10:00 – 10:15 *Գրանցում*

10:15 – 10:30 *Բացման խոսք*

Պարոն Գագիկ Եգանյան, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ

Պարոն Դիրկ Բոնեթ, ՄԱԶԾ Մշտական ներկայացուցչի տեղակալ

Տիկին Իլոնա Տեր-Մինասյան, ՄՄԿ հայաստանյան գրասենյակի ղեկավար

10:30 – 11:15 *Թեմա 1. Ընդհանուր տեղեկություն միգրացիայի վերաբերյալ /կանոնավոր և անկանոն/: Աշխատանքային միգրացիայի միտումները և բնութագրիչները /մղող և ձգող գործոններ, առողջապահական և գենդերային խնդիրներ և այլն/, միգրացիոն տերմինաբանություն, ընդհանուր տեղեկություններ մարդկանց մաքսանենգության և մարդկանց առևտրի վերաբերյալ*

Հարցեր/պատասխաններ

Տիկին Նունե Ասատրյան, ՄՄԿ Հայաստան, ծրագրի ղեկավար

11:15 – 11:45 **Սուրճի ընդմիջում**

11:45 – 12:15 *Թեմա 2. Թրաֆիքինգի զոհերի ազգային ուղղորդման մեխանիզմի ներկայացում*

Հարցեր/պատասխաններ

Տիկին Ջյունիկ Աղաջանյան, ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ

12:15 – 13:15 *Թեմա 3. Աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանությունն ապահովող տեղական օրենսդրական դաշտը; թրաֆիքինգի դեմ պայքարի տեղական օրենսդրությունը*

Հարցեր/պատասխաններ
Պարոն Գարիկ Սահակյան, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Պետական զբաղվածության գործակալության պետի տեղակալ

13:15 – 14:00 *Թեմա 4. Ծագման երկրներում աշխատանքային միգրանտների պաշտպանությունը /քաղաքականություն, գրանցում և լիցենզավորում, աջակցող ծառայություններ՝ ներառյալ մինչ մեկնելը գրանցման և կողմնորոշման գործընթացները/:*

Հարցեր/պատասխաններ

Պարոն Արամ Քոչարյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի գործակալության վարչություն

14:00 – 15:00 **Ճաշի ընդմիջում**



- 15:00 – 15:30 Թեմա 5. Աշխատանքային միգրանտների պաշտպանությունը ընդունող երկրներում /աշխատաշուկայի ուսումնասիրություն, նախամիգրացիոն ուսուցումներ, իրազեկում, միջազգային համագործակցություն:
Հարցեր/պատասխաններ
Պարոն Արամ Քոչարյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և զբաղվածության վարչություն
- 15:30 – 16:00 Թեմա 6. Պետական և մասնավոր աշխատանքի գործակալությունների դերը
Հարցեր/պատասխաններ
Պարոն Արամ Քոչարյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և զբաղվածության վարչություն
- 16:00 – 16:30 Առաջին օրվա ամփոփում
Հարցեր/պատասխաններ
Տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Օր 2, 19.11.2009

Վարող՝ տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

- 10:00 – 10:15 Առաջին օրվա վերհիշում
Հարցեր/պատասխաններ
տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
- 10:15 – 11:30 Թեմա 7. Վերադարձողների պաշտպանությունը և աջակցություն նրանց վերաինտեգրմանը:
Հարցեր/պատասխաններ
Պարոն Խաչատուր Կազազյան, ՄՄԿ Հայաստան, Փոքր բիզնեսի զարգացման ծրագրի ղեկավար
- 11:30 – 12:00 Սուրճի ընդմիջում**
- 12:00 – 12:20 Թեմա 8. Կանոնավոր աշխատանքային միգրացիայի առավելությունները /դրամական փոխանցումներ, զարգացում և այլն/:
Հարցեր/պատասխաններ
Պարոն Խաչատուր Կազազյան, ՄՄԿ Հայաստան, Փոքր բիզնեսի զարգացման ծրագրի ղեկավար
- 12:20 – 13:30 Թեմա 9 – 10. Վրաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի և Իրանի միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը
Տիկին Նունե Ասատրյան, ՄՄԿ Հայաստան, ծրագրերի համակարգող
- 13:30 – 14:30 Թեմա 11. Գլոբալ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը աշխատանքային միգրացիայի վրա
Հարցեր/պատասխաններ
Տիկին Նունե Ասատրյան, ՄՄԿ Հայաստան, ծրագրերի համակարգող
- 14:30 – 15:30 Ճաշի ընդմիջում**
- 15:30 – 16:00 Թեմա 12. Աշխատանքային միգրացիայի կառավարումը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում՝ Համագործակցություն և իրավական կարգավորում
Տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
Պարոն Գարիկ Սահակյան, Պետության ղեկավարության գործակալության պետի տեղակալ



16:00-16:30 Երկրորդ օրվա ամփոփում
Հարցեր/պատասխաններ
Տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Օր 3, 20-ը նոյեմբերի, 2009թ.

10:00 – 10:15 Երկրորդ օրվա վերհիշում
Հարցեր/պատասխաններ
Տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

10:15 – 11:00 Թեմա 13. Աշխատանքային միգրանտների /կանոնավոր և անկանոն/ իրավունքների պաշտպանությունն ապահովող միջազգային օրենսդրական դաշտը:
Հարցեր/պատասխաններ
Պարոն Նվեր Սարգսյան, Ծրագրի ղեկավար, ՄՄԿ Հայաստան

11:00 – 11:45 Թեմա 14. Թուրքիայի և Հունաստանի միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը
Հարցեր/պատասխաններ
Պարոն Նվեր Սարգսյան, Ծրագրի ղեկավար, ՄՄԿ Հայաստան

11: 45 – 12:15 **Սուրճի ընդմիջում**

12:15 – 12:30 Թեմա 15. Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոնների աշխատանքային փորձի ներկայացում
Երևանի Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոն
Հարցեր/պատասխաններ
Պարոն Համբարձում Արրահանյան, տիկին Վիկտորյա Հովհաննիսյան, տիկին Հայկանուշ Չորանյան

12:30 – 12:45 Գյումրիի Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոն
Հարցեր/պատասխաններ
Պարոն Ռաֆիկ Փոթինյան

12:45 – 13:00 Արարատի Աշխատանքային միգրանտների աջակցության կենտրոն
Հարցեր/պատասխաններ
Պարոն Գեղամ Միրզոյան

13:00 – 14:00 Թեմա 16. Արհմիությունների համաշխարհային կոնֆեդերացիայի դերը աշխատանքային միգրացիայի ոլորտում
Հարցեր/պատասխաններ
Տիկին Էլեն Մանասերյան, Արհմիությունների համաշխարհային կոնֆեդերացիա

14:00 – 15:00 **Ճաշի ընդմիջում**

15:00 – 15:40 Թեմա 17. Ռուսաստանի Դաշնության և Արաբական միացյալ էմիրությունների միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը
Թեմա 18. Գործնական հանձնարարականներ/խորհուրդներ վարվելակերպի, հանդուրժողականության, ընդունող երկրի մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև ընդունող երկրի հյուպատոսական ծառայության, ՀԿ-երի, համապատասխան հունանիտար կազմակերպությունների վերաբերյալ, որոնց միգրանտը կարող է դիմել անհրաժեշտություն դեպքում
Հարցեր/պատասխաններ
Պարոն Արթուր Ստեփանյան, ՀՀ Արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության առաջին քարտուղար

5:40-16:00 Ամփոփում
Տիկին Քրիստինա Գալստյան, ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ծրագրերի



16:00 – 16:10

մշակման և իրականացման բաժնի պետ

Փակման խոսք

Պարոն Գագիկ Եգանյան, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ

Տիկին Մարինա Սուխայան, ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի համակարգող

Տիկին Իլոնա Տեր-Մինասյան, ՄՄԿ հայաստանյան գրասենյակի ղեկավար

ՄԱՍ IV

Ապահով ճամփորդություն. նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագիր «Միգրանտների աջակցության կենտրոնների կարողությունների առավել հզորացում և հասարակության իրազեկում» Փուլ I և II

Ամփոփ հաշվետվություն

Ծրագիրն իրականացվել է Երևան, Արտաշատ (Արարատի մարզ) և Գյումրի (Շիրակի մարզ) քաղաքներում՝ 2007թ. նոյեմբերի 7-ից մինչև 2009թ. դեկտեմբերի 31-ը: Ծրագրի սկզբնական իրականացման ժամկետը սպառվում էր 2009թ. օգոստոսի 31-ին, սակայն համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցության ներքո ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի իրականացման մեջ տեղի ունեցան մի շարք փոփոխություններ ուղղված ճգնաժամը մեղմելու միջոցառումներին՝ մասնավորապես միգրանտների համար: Այսպիսով ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի ավարտի ժամկետի երկարացման արդյունքում ՄԱԶԾ/ՄԳ միջև կնքված փոխըմբռնման հուշագրի ժամկետներն էլ վերանայվեցին մինչև 2009թ. դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի շրջանակներում մինչև 2008թ. հոկտեմբեր ամիսը Երևան, Գյումրի և Արտաշատ քաղաքներում ստեղծվեցին միգրացիոն հարցերով խորհրդատվական կառույցներ, հատկացվեցին աշխատանքային տարածքներ, առանձնացվեց աշխատակազմ, իսկ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը Գյումրիի և Արտաշատի կենտրոններն ապահովեց համապատասխան կահավորմամբ և սարքավորմամբ, ինչպես նաև կենտրոնների համար ապահովեց համապատասխան տեղական և միջազգային հեռախոսակապի քարտեր և ինտերնետային կապի քարտեր:

Երևան

Ստորև ներկայացվում է գծապատկեր, որն արտացոլում է միգրացիոն հարցերով ՀՀ միգրացիոն գործակալություն դիմած անձանց այցելությունների և հեռախոսազանգերի թիվը 2008թ. սեպտեմբեր ամսից մինչև 2008թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում: Ինչպես երևում է գծապատկերից այցելությունների և հեռախոսազանգերի կտրուկ աճ նկատվում է 2008թ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում, ինչն ըստ մեզ պայմանավորված է ռադիոյով և բջջային հեռախոսներով ՄՄԿ հայաստանյան առաքելության (IOM)-ի և ՄԱԶԾ Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի (UNDP)-ի կողմից հեռուստատեսությամբ, ռադիոյով և բջջային հեռախոսներով ծրագրի շրջանակներում իրաստած սոցիալական զովագրների ցուցադրմամբ/մատուցմամբ /2008թ. նոյեմբերից մինչև 2008թ. դեկտեմբերի վերջը; 2009թ. հոկտեմբեր-նոյեմբեր/: Այս սոցիալական զովագրների հիմնական նպատակն էր հանրությանը իրազեկել թրաֆիքինգի ինքնական միգրացիայի հետևանքների




վերաբերյալ, ինչպես նաև լուսաբանել ծրագրի շրջանակներում ստեղծված կենտրոնների կողմից տրամադրվող խորհրդատվական ծառայությունների մասին:


Սեպտեմբեր ամսին դիմել են 18 անձ, հոկտեմբերին՝ 24, նոյեմբերին՝ 30, իսկ դեկտեմբերին՝ 109: Դիմողների թվի աճը բացատրվում է նաև դեկտեմբեր ամսին ՄԳ պետի հեռուստատեսությամբ բավականին հաճախակի իր ելույթների ժամանակ տրամադրված տեղեկատվությամբ: Գծապատկերից երևում է, որ դիմողների թվաքանակի մեծությունը ուղղակիորեն կախված է իրականացվող իրազեկման արշավից, ընդ որում դիմողների մեծամասնությանը /մոտ 70%/ հետաքրքրել են աշխատանքային միգրացիային առնչվող հարցերը:

2008թ. սեպտեմբեր-դեկտեմբեր

IX - 18
X - 24
XI - 30
XII - 109



Այսպիսով, 2008թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին երևանի խորհրդատվական կենտրոն այցելել և հեռախոսազանգով դիմել են 181, 2009թ հունվար-մարտ ամիսներին՝ 143, 2009թ. ապրիլ-հունիս ամիսներին՝ 118, իսկ հուլիս-նոյեմբեր ամիսներին՝ 212 քաղաքացի:



Ընդհանուր առմամբ 2008-2009թթ. միգրացիոն գործակալություն դիմած 654 անձանցից 33-ից մեկնողների թիվը կազմում է **257**, իսկ 33 վերադարձած անձանց թիվը՝ **397** մարդ: Ամփոփելով նշենք, որ հայրենիք վերադարձի և վերաինտեգրման հետ կապված խորհրդատվությունը իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- Փաստաթղթերի ձեռքբերում, փոխանակում, հաշվառում;
- Ջբաղվածության ապահովում;
- Սոցիալական օգնության հարցեր;
- Առողջապահական բնույթի հարցեր;
- Կրթական բնույթի հարցեր;
- Ձինվորական ծառայության հետ կապված հարցեր:

Կենտրոնի խորհրդատուն վերադարձի և մտեգրման հետ կապված հարցերում առաջնորդվում է հետևյալ աշխատակարգով. - լսելով քաղաքացուն՝ ինքն է տալիս խորհրդատվություն.



- հրավիրում է Միգրացիոն գործակալության համապատասխան մասնագետ.
- ուղղորդում է գործընկեր պետական մարմինների առանձնացված մասնագետների ցանցում ընդգրկված համապատասխան աշխատակցի մոտ.
- բացի ուղղորդելուց զանգահարում է պետական կառույցի համապատասխան մասնագետին կամ այդ կառույց նամակ է ուղարկում: Հարկ է նշել, որ ստեղծվել է գործընկեր կառույցների աշխատակիցների ցանց, որն իր մեջ ներառում է հետևյալ պետական մարմիններին՝ ՀՀ ոստիկանություն /Անձնագրային և վիզաների վարչություն/, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն/ՀՀ զինվորական կոմիսարիատ/, ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ Ջրաղվածության պետական ծառայության գործակալություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Ինչ վերաբերում է պոտենցիալ միգրանտներին տրվող խորհրդատվությանը, խորհրդատուն առաջնորդվում է հետևյալ աշխատակարգով՝

- լսելով քաղաքացուն՝ ինքն է տալիս խորհրդատվություն;

- հրավիրում է Միգրացիոն գործակալության համապատասխան մասնագետ

Ռուսաստան մեկնելու ցանկություն ունեցողների համար կազմակերպվել է սեմինար-խորհրդատվություն այդ երկիր մուտք գործելու, այնտեղ գտնվելու և աշխատելու կանոնների, համապատասխան ընթացակարգերի, ինչպես նաև դրանց խախտման պատասխանատվության վերաբերյալ: Նրանց տրամադրվել են նաև ՄՄԿ հայաստանյան առաքելության հեղինակած «ՌԴ ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույցները», ինչպես նաև «Արաբական Միացյալ Էմիրություններում ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույցները»:

Արտասահման մեկնող անձանց հետ Կենտրոնի աշխատակիցների կողմից բացատրական աշխատանքներ են տարվել նաև անօրինական միգրացիայի վտանգների և հետևանքների ուղղությամբ: Այդ նպատակով մշակվել և 100.000 օրինակով տպագրվել է «Օրինական ճանապարհով օտարերկրյա պետություններ մուտք գործելու, բնակվելու և աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին» տեղեկատվական թերթոնը: Թերթոնի 10.000 օրինակ տրամադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ջրաղվածության պետական ծառայություն գործակալությանը, 30.000 –ը՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, 20.000-ը՝ «Զվարթնոց» օդանավակայանին, 40.000–ը ռեսուրս կենտրոններին:

Գյուճարի

Գյուճարիում գործող միգրացիոն հարցերով խորհրդատվական կենտրոն 2008թ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին այցելել են 57, 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին՝ 91, 2009թ. ապրիլ-հունիս ամիսներին՝ 370, իսկ հուլիս-հոկտեմբեր ամիսներին՝ 182 քաղաքացի, որոնց համար նույնպես կազմակերպվել է խորհրդատվություն Ռուսաստան մուտք գործելու, այնտեղ գտնվելու և աշխատելու կանոնների, համապատասխան ընթացակարգերի, ինչպես նաև դրանց խախտման պատասխանատվության վերաբերյալ: Նրանց տրվել են նաև ՄՄԿ հայաստանյան առաքելության հեղինակած «ՌԴ ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույցները»: Ընդհանուր առմամբ 2008-2009թթ. խորհրդատվական կենտրոն դիմողների քանակն է 721 հոգի:

2009թ. հունվար ամսին կայացած մարզխորհրդի նիստում Կենտրոնի կողմից համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել մարզի համայնքների ղեկավարներին: Վերոհիշյալ ուղեցույցների ղեկավարներին են տրամադրվել: Ուղեցույցներ են տրամադրվել նաև սոցիալական ծառայությունների ղեկավարներին: Արդյունավետ համագործակցություն է հաստատվել հետ: Շիրակի մարզպետարանի ղեկավարներին և Բ. Փոթինյանի մասնակցությամբ



տեղեկատվական-քարոզչական բնույթի հարցազրույց է հեռարձակվել «Շանթ» և «Ցայգ» հեռուստաալիքներով:

Կազմակերպվել են հանդիպումներ մարզի գյուղական համայնքների ղեկավարների հետ: Այցելություններ են եղել Արթիկի, Մարալիկի, Ախուրյանի, Ամասիայի, Աշոցքի թվով 12 համայնքներ: Իրավական ակտերի ժողովածուներ են տրամադրվել մարզի բոլոր 116 գյուղական համայնքապետարաններին՝ ամնիջականորեն համայնքներում խորհրդատվություն իրականացնելու նպատակով: Նմանատիպ ակտիվ աշխատանք է տարվում նաև սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կողմից, որոնց աշխատակիցների համար կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ:


Խորհրդատվական աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ցուցաբերում նաև զբաղվածության Գյումրու մարզային կենտրոնը: Վերոհիշյալ աշխատանքներում ներգրավվում են նաև տարածքում գործող հասարակական կազմակերպությունները:

2009թ. առաջին կիսամյակում մարզային խորհրդի նիստում բոլոր 119 համայնքների ղեկավարներին ներկայացվել է հիմնախնդիրը, հաստատվել է կայուն համագործակցություն: Համայնքային կառույցներին են տրամադրվել ՄՄԿ հայաստանյան առաքելության հեղինակած շուրջ 250 օրինակ «ՌԴ ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույց»-ները: Ծրագրում ընդգրկված ՍՕՏԳ-ների և զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից խորհրդատվություն է կազմակերպվել շուրջ 300 պոտենցիալ միգրանտների համար և բաժանվել շուրջ 150 ուղեցույց:

Արտաշատ

Արտաշատում գործող միգրացիոն հարցերով խորհրդատվական կենտրոն 2008թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին այցելել և հեռախոսազանգով դիմել են 63 քաղաքացի, 2009թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում՝ 71 քաղաքացի, 2009թ. ապրիլ-հունիս ամիսներին՝ 118 քաղաքացի, իսկ հուլիս-նոյեմբեր ամիսներին՝ 68 քաղաքացի, որոնց հիմնական խնդիրը եղել է խորհրդատվություն ստանալ Ռուսաստան մուտք գործելու, այնտեղ գտնվելու և աշխատելու կանոնների վերաբերյալ: Նրանց նույնպես տրվել են ՄՄԿ հայաստանյան առաքելության հեղինակած «ՌԴ ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույցները»:

Ընդհանուր առմամբ 2008-2009թթ. խորհրդատվական կենտրոն դիմողների քանակն է 320 հոգի:



2008թ. դեկտեմբերին մարզխորհրդի նիստում համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել մարզի համայնքների ղեկավարներին: 2009թ. ապրիլ-հունիս ամիսներին համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն և բաժանվել են ուղեցույցներ:

Ուղեցույցներ են տրամադրվել նաև մարզի 3 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին և Արարատ քաղաքի ՍՕՏԳ-ին՝ վերոհիշյալ գործընթացին աջակցելու նպատակով: Նրանց հետ համագործակցությունն արժանակվել է նաև 2009թ.-ին:

Համագործակցություն կա նաև մարզի զբաղվածության կենտրոնների և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:



Համագործակցություն նշանակետ երկրների պատկան մարմինների հետ

Հաշվի առնելով այն իրողությունը, որ Արաբական Միացյալ Էմիրությունները Հայաստանի համար հանդիսանում են նպատակակետ երկրներից մեկը թրաֆիքինգի առումով, համագործակցություն է հաստատվել այդ երկրի համապատասխան մարմինների հետ: Որպես առաջին քայլ՝ 2008թ. ապրիլի 18-23-ը հայկական պատվիրակությունը, որը գլխավորում էր ՄԳ պետ պրն Գ. Եզանյանը, եղավ Միացյալ Էմիրություններում և տեղում հանդիպեց համապատասխան պաշտոնյաների հետ և նրանց հետ քննարկեց մի շարք հարցեր: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ԱԳՆ Միջազգային կազմակերպությունների վարչության պետ Ջյունիկ Աղաջանյանը, Հյուպատոսական վարչության միգրացիոն բաժնի պետ Արթուր Սարգսյանը և ՀՀ-ում ՄԱԶԾ թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի համակարգող Հայկ Խենջյանը:

ԱՄԷ-ում հայկական պատվիրակությանը հյուրընկալեց ԱՄԷ Ներքին գործերի նախարարությունը, որն էլ անմիջականորեն զբաղվում է միգրացիայի հետ կապված խնդիրներով: Հատկապես սերտ էր աշխատանքը նախարարության նատուրալիզացիայի և կացության հարցերով գլխավոր տնօրինության հետ, որոնց առաջարկվեց հետագա համագործակցությունն ամրագրել համապատասխան Փոխըմբռնման հուշագրի ստորագրման միջոցով: Պայմանավորվածություն ձեռքբերվեց այն մասին, որ հայկական կողմը մշակի հուշագրի տեքստը և ներկայացնի մյուս կողմին: Դրա հետ կապված 2008թ. մայիսի 4-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարին է ներկայացվել այդ փաստաթղթի տեքստը հայերեն և արաբերեն լեզուներով՝ համապատասխան ընթացք տալու նպատակով: Հուշագիրը ստորագրվել է ԱՄԷ-ի պաշտոնյաների կողմից և ՀՀ Արտաքին գործերի նախարարություն է ուղարկվել 2009թ. նոյեմբեր ամսին:

2008թ. հունիսի 5-ին ՄԱԶԾ-ի և ՄԳ-ի կողմից պատրաստվել և ՀՀ Արտաքին գործերի նախարարություն է հղվել գրություն՝ սույն ծրագրի շրջանակներում միգրացիոն խնդիրներով համագործակցություն հաստատելու նպատակով հայկական պատվիրակության այցը դեպի Ռուսաստանի դաշնություն՝ Մոսկվա կազմակերպելու հարցով:

Այսպիսով, վերոնշյալ այցը կազմակերպվեց 2009թ. մարտի 22-26-ը Մոսկվա քաղաքում: Հայաստանյան պատվիրակության կազմում ընդգրկված էին ՄԳ պետ Գագիկ Եզանյանը, ԱԳՆ Միջազգային կազմակերպությունների վարչության մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կարինե Սուլջանը, Հյուպատոսական վարչության միգրացիոն բաժնի պետ Արթուր Սարգսյանը և ՀՀ-ում ՄԱԶԾ թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի համակարգող Մարինա Սոլախյանը: Այցելության հիմնական նպատակը ծրագրի շրջանակներում անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով ՌԴ պատկան մարմինների հետ համագործակցություն հաստատելն էր: Հանդիպումներ տեղի ունեցան Ռուսաստանի Առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարությունում, Դաշնային միգրացիոն ծառայությունում, Մոսկվայի Քաղաքապետարանի կառավարությունում, ինչպես նաև Ռուսաստանում Հայաստանի դեսպանությունում՝ Ռուսաստանում գործող հայկական կազմակերպությունների և խնդրով զբաղվող ռուսաստանյան ոչ կառավարական կազմակերպությունների հետ: Հանդիպման ընթացքում Դաշնային միգրացիոն գրասենյակի հետ կնքվեց Փոխըմբռնման հուշագիրը:

Դաշնային միգրացիոն գրասենյակի տնօրեն Կ. Ռամադանովսկու, Ռուսաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Սմբատյանի և Միգրացիոն գործակալության պետ պրն. Գ. Եզանյան միջև նախնական պայմանավորվածություն ձեռքբերվեց կազմակերպել առանձին հանդիպում Ռուսաստանի հայ գործարար շրջանակների և սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում կներկայացվեր Ռուսաստանի և Հայաստանի միգրացիոն քաղաքականությունը, անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի հետ կապված հարցերը: Այն ծրագրվեց անցկացնել 2009թ. մայիսի 12-ին Մոսկվայի մեր դեսպանատան դահլիճում:

Մոսկվայում Հայաստանի դեսպանության էին շուրջ 100 անձինք: Հանդիպումը ներկայացրեց լիազոր դեսպան պրն. Ա. Սմբատյանը, գործակալության պետ պրն. Գ. Եզանյանը:



կայացած այդ հանդիպմանը մասնակցում խոսքով բացեց ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պրն. Ա. Սմբատյանը, իսկ հետո ելույթ ունեցավ ՌԴ Միգրացիոն

Դաշնային ծառայության տնօրեն պրն. Կ. Ռոմադանովսկին: Նա պատասխանեց շուրջ 3 տասնյակ հարցերի: Հանդիպման ներկայացվեց, ինչպես Հայաստանի միգրացիոն իրավիճակի փոփոխությունների, այնպես էլ ՌԴ կողմից այս ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ տեղեկություններ: Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ ներկաները միգրացիայի վերաբերյալ իրենց հուզող հարցերը կուղղեն դեսպանություն, որտեղ դրանք խմբավորելուց հետո կներկայացվեն ՌԴ Միգրացիոն Դաշնային ծառայություն: Հանդիպման բոլոր մասնակիցները առանձնահատուկ նշեցին նման միջոցառումների կարևորությունը և օգտակարությունը:

Ուսուցումների կազմակերպում

2008թ. հոկտեմբեր ամսին տեղի է ունեցել եռօրյա ուսուցում միգրացիոն հարցերով խորհրդատվական կառույցի աշխատողների համար: Առաջին երկու օրերին դասընթացն անցկացվել է „Աշխատանքային միգրացիա,, թեմայով, երրորդ օրը՝ “Շփման և փոխհարաբերությունների արվեստը” խորագրով: Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ միջազգային և ՌԴ օրենսդրության վերաբերյալ դասախոսությունը կարդաց ՄՄԿ ռուսաստանյան ներկայացուցիչ Սերգեյ Բրեստովիցկին: Յուրաքանչյուր դասախոսությունից հետո նախատեսված էին հարցեր և պատասխաններ: Տրվեցին նաև գործնական առաջադրանքներ:

Միգրացիոն հարցերով խորհրդատվական կառույցի աշխատողների համար ուսուցում իրականացվել է նաև 2009թ. նոյեմբերին: Ուսուցման ընթացքում տրվեց ընդհանուր տեղեկություններ միգրացիայի վերաբերյալ /կանոնավոր և անկանոն/, ներկայացվեցին աշխատանքային միգրացիայի միտումները և բնութագրիչները, միգրացիոն տերմինաբանությունը, աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանությունն ապահովող միջազգային և տեղական օրենսդրական դաշտը, թրաֆիքինգի դեմ պայքարի տեղական օրենսդրությունը, Ռուսաստանի Դաշնության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Վրաստանի, Ղազախստանի և Ուկրաինայի միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով աստիճանաբար միգրացիոն կենտրոնների դիմողների մեջ սկսեց գերակշռել վերադարձի և հայրենիքում վերադարձված հարցերով դիմողների թիվը: Զգալիորեն նվազեց նաև արտագնա աշխատանքների մեկնման ամիսներին ՌԴ-ում աշխատանքի տեղավորման աջակցման հարցերով դիմողների քանակը:

Զնայած այն փաստին, որ ՄԱԶԾ/ՄԳ փոխընթացման հուշագիրն ավարտվում է 2009թ. դեկտեմբերի վերջին, Միգրացիոն գործակալությունը կշարունակի միգրանտների շրջանում խորհրդատվական ծառայությունները: Ինչ վերաբերում է Գյումրիի և Արտաշատի միգրացիոն խորհրդատվական կենտրոններին, ապա փորձ կարվի գտնել այլ շրագրեր, որպեսզի ստեղծված կենտրոնները կարողանան շարունակել իրենց գործունեությունն այդ ուղղությամբ:

